ՉԱՏԿԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
Մոսկվայի և համայն Ռուսիո ԿՅՈՒՐԵՂ Պատրիարքի
Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին, սարկավագներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Սիրելի՛ ի Տեր Սրբազան հովվապետներ, արժանապատիվ երեցներ և սարկավագներ, աստվածասեր վանականներ և միանձնուհիներ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

Ներկայիս *տոներից տոնին և հանդիսությունների հանդիսությանը*, որը, ըստ Սուրբ Գրիգոր Աստվածաբանի խոսքի, *այնքանով է գերազանցում բոլոր տոնակատարությունները, ոչ միայն մարդկային և երկրային, այլև Քրիստոսի և Քրիստոսի համար կատարվող, որքան արևն է գերազանցում աստղերը* (Ճառ 45. Ի Սուրբ Զատիկ), մեծ ուրախությամբ ձեզ եմ հղում հնագույն ու հավերժ նոր, ամենքին ծանոթ և միևնույն ժամանակ մեր սրտերը անփոփոխ թևավորող ողջույնը.

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱ՛Վ:

Կենսահաստատ այս երկու բառերն այնքան զորություն են պարունակում, որ դրանցից մարդկանց դեմքերը փայլում են հոգևոր ուրախությամբ, և մեզ շրջապատող իրականությունը տառացիորեն

փոխակերպվում է. *երկինքն ու երկիրը և նույնիսկ սանդարամետը լցվում են լույսով, երևացող ու աներևույթ աշխարհը տոնում է, քանզի հարյավ Քրիստոս, հավիտենական ուրախություն* (կանոն տոնի):

Փրկչի Հարությունը՝ դա սոսկ պատմական իրադարձություն չէ, որի մասին մենք իմանում ենք սուրբ տեքստերից: Դա՝ հավատքի անկյունաքարն է և, ըստ սուրբ Փիլարետոս Մոսկվացու խոսքի, *հավիտենական լուր, մտորումների, զարմանքի, երախտագիտության և հույսի աղբյուր* (Խոսք Սուրբ Զատկի օրը):

Մարմնավորմամբ, չարչարանքով և եռօրյա հարությամբ Փրկիչը նորոգում է մարդկային բնությունը, ազատում է մեզ մեղքի և մահվան իշխանությունից, բացում է Երկնքի Արքայության դռները մարդկանց առջև և ցույց է տալիս մեզ Արարչի հետ միավորվելու ճանապարհը: Հենց Քրիստոսով է, *Ով հաշտեցրեց աշխարհը Աստծո հետ* (Բ Կորնթ. 5:19), որ մենք բոլորս հնարավորություն ունենք ստանալու որդեգրում և արդարացում, հավիտենական կյանք, քանի որ չկա *երկնքի տակ այլ անուն, որով մենք պետք է փրկվենք, բացի Հիսուսի անունից, որին Աստված հարություն տվեց մեռելներից* (Գործք Առաքելոց 4:10–12):

Գերեզմանից Փրկչի հառնելը փոխարկում է մահը անմահության, տխրությունը՝ ուրախության, դատապարտվածությունը՝ հույսի: Խաչի վրա և Հարության մեջ մեզ բացահայտվում է անսահման բարության և կատարյալ սիրո Աստվածը:

Աստծո այս ամենահաղթ սիրո գիտակցումը արթնացնում է մեր մեջ Արարչի հանդեպ երախտապարտություն և ուժ է տալիս

հաղթահարելու ամենածանր հոգեկան վիճակներն ու դժվարին հանգամանքները, վեր է բարձրացնում մեզ առօրյա կյանքի եռուզեռից, օգնում է ուղղել նախկին սխալները և կործանում է տրտմությունը, որը խանգարում է մեզ լիարժեք ապրել և հոգեպես զարգանալ:

Հաճախ մարդիկ ենթարկվում են այն սուտ մտքերին, թե չարը գերիշխում և հաղթանակում է, իսկ բարին՝ աննկատ է և թույլ: Մեր բանականությունը կասկածում է Քրիստոսի կատարած քավության զորությանը, երբ տեսնում է շուրջը գտնվող մերձավորների մահը, Ավետարանի էջերից լսում է մեղավորների հավիտենական տանջանքների մասին և դիտում է *չարի մեջ եղող աշխարհը* (Ա Հովհաննես 5:19): Բայց Աստծո Եկեղեցին հազարամյակներ շարունակ համոզիչ կերպով վկայում է. Փրկիչը հաղթեց մեղքը, *կործանեց մահը և դատարկեց դժոխքը* (սբ. Հովհան Ոսկեբերան, Ճառ ի Սուրբ Զատիկ): Քրիստոսը հաղթահարեց մահվան անխուսափելիությունը և չարի համընդհանրությունը, և մենք դրանց պարտությանը հավատի աչքերով ենք նայում՝ արդեն հանդերձյալ հավիտյանի կյանքից, Զատկական բարձունքից:

Գերեզմանից Տիրոջ հառնելը հիշեցնում է մեզ ոչ միայն անցյալի ամենակարևոր իրադարձության մասին, այլև վկայում է գալիք ընդհանուր հարության մասին, *քանզի եթե հավատում ենք, որ Հիսուս մեռավ և հարություն առավ, այդպես էլ Աստված Հիսուսի միջոցով ննջեցյալներին եւ կյանքի պիտի բերի Նրա հետ* (Ա Թես. 4:13): Իսկ մենք պետք է Տիրոջ պատվիրանները կատարելով՝ սիրո և գթության գործերով, Եկեղեցու խորհուրդներին մասնակցելով,

միանանք Քրիստոսի հաղթանակին և մինչև վերջ հավատարիմ մնանք Նրան՝ հիշելով Սուրբ Գրքի խոսքերը. *ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծո կամքը կատարելով՝ ստանաք խոստացվածը* (Եբր. 10:36):

Ուստի, սիրելի եղբայրներ և քույրեր, ըստ առաքյալի խոսքի, *մի՝ կորցրեք ձեր վստահությունը, որի մեջ մեծ վարձատրություն կա* (Եբր. 10:35): Եւ թող Տեր Հիսուսի Հարության տոնը մշտապես հիշեցնի Աստվածային այս անսուտ խոստումների մասին, որոնք մեզ հույս ու ուժ են տալիս ամենադժվար հանգամանքներում: Թող այս տոնը ոգեշնչի բոլորիս ապրել հավատքի և սիրո մեջ՝ իմանալով, որ ոչ մահը, ոչ տառապանքը, ոչ չարը չեն կարող մեզ հաղթել, եթե մենք Քրիստոսի հետ ենք և Քրիստոսի մեջ ենք, Ով հաղթեց մեղքը, մահը և ամեն անիրավություն:

Տոնենք Տիրոջ Զատիկը կյանքի մաքրությամբ, բարեբարոյությամբ և բարի գործերով (սբ. Աթանաս Մեծ. Զատկական տասներորդ նամակ), որպեսզի Քրիստոսով նոր մարդու փոխակերպվելով և *կենդանի ու ճշմարիտ Աստծուն ծառայելով՝ սպասենք երկնքից Նրա Որդու գալստյանը, Որին Նա հարություն տվեց մեռելներից՝ Հիսուսին, ազատելով մեզ վերահաս բարկությունից* (Ա Թեսաղ. 1:9–10): Ամեն:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Զատիկ
2024 թ.